ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.05.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2022/61

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ֆ. Մանգյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն

Բողոք բերող՝ «Փուշընդփուլլ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՏՈՒԳՈՒՄ/2022/Հ-40» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, տեխնիկական ստուգման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Փուշընդփուլլ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 13.04.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՏՈՒԳՈՒՄ/2022/Հ-40» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեղյալ

համարել «Փուշընդփուլլ» ՍՊԸ-ի հայտում անհամապատասխանություն արձանագրելու, շտկում պահանջելու, հայտը մերժելու և գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումները:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 13.04.2022թ.-ին:

14.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/61 համարի ծածկագիրը:

27.04.2022թ.-ին և 06.05.2022թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 27.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.05.2022թ.-ին:

2. «Փուշընդփուլլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Փուշընդփուլլ» ՍՊԸ-ն 13.04.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանությունը տեխնիկական ստուգման ծառայությունների գնման նպատակով 28.03.2022թ.-ին հրապարակել է ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՏՈԻԳՈԻՄ/2022/Հ-40 ծածկագրով գնանշման հարցումը:

Գնանշման հանցմանը մասնակցության հայտ են ներկայացրել երկու ընկերություն «ՓՈԻՇԸՆԴՓՈԻԼԼ» ՍՊԸ-ն և «Այթի էքսպերտիզա» ՍՊԸ-ն:

ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՏՈԻԳՈԻՄ/2022/Հ-40 ծածկագրով ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրով սահմանվել է նաև, որ «Գնման ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող մասնակիցը կամ մասնակցող կոնսորցիումի գոնե մեկ անդամը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, պետք է ներկայացնի հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք տարիների ընթացքում մասնակցի կողմից պատշաճ ձևով մատուցած նմանատիպ ծառայությունների վերաբերյալ փաստաթղթեր, մասնավորապես համակարգիչների, համակարգչային սարքերի տեխնիկական վիճակի և ծրագրային փաթեթների սպասարկման պայմանագրեր, ինչպես նաև ներկայացվող պայմանագրերի պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթերի պատճեններ /հանձնման-ընդունման արձանագրություն/: Պետք է ունենա համապատասխան մասնագիտական աշխատակազմ, որը պետք է բաղկացած լինի առնվազն 3 անձից, ովքեր կունենան ա/ համապատասխան մասնագիտական որակավորում /անհրաժեշտ է

ներկայացնել որակավորումը հավաստող փաստաթղթեր օր. դիպլոմ, վկայագիր, հավաստագիր/, բ/ առնվազն 3 տարվա համապատասխան աշխատանքային փորձ /անհրաժեշտ է նշել յուրաքանչյուր մասնագետի գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը, ժամանակահատվածը, գործատուի անվանումը/:

ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՏՈԻԳՈԻՄ/2022/Հ-40 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 07.04.2022թ. N 2-րդ արձանագրությամբ նշել է, որ «ՓՈԻՇԸՆԴՓՈԻԼԼ» ՍՊԸ-ի կողմից ընդհանրապես չի ներկայացվել նախորդ տարիներին կատարված նմանատիպ ծառայությունների վերաբերյալ պայմանագրեր, ինչպես նաև հրավերով պահանջվող համապատասխան աշխատակազմի վերաբերյալ փաստաթղթեր, ուստի գնահատող հանձնաժողովը որոշել է ընթացակարգի նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և «ՓՈԻՇԸՆԴՓՈԻԼԼ» ՍՊԸ-ին առաջարկել կատարել արձանագրված անհամապատասխանությունների շտկում:

ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՏՈԻԳՈԻՄ/2022/Հ-40 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 11.04.2022թ. N 3-րդ արձանագրությամբ նշել է, որ ընկերությունը սահմանված ժամկետում շտկում չի կատարել:

www.gnumner.am կայքում հրապարակվել է ՀՀ ԿԱ ոստիկանություն կարիքների համար ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՏՈԻԳՈԻՄ/2022/Հ-40 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Գնումների մասին ՀՀ Օրենքի 34 հոդվածի 1 մասին համաձայն՝ Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Սույն պարագայում, կարելի է արձանագրել, որ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը N 2 արձանագրությամբ «ՓՈԻՇԸՆԴՓՈԻԼԼ» ՍՊԸ-ի հայտում արձանագրելով անհամապատասխանություն, այն պատճառաբանությամբ, որ ընկերությունը չի ներկայացրել հրավերի տեխնիկական բնութագրով, ըստ էության խտրական, պահանջված փաստաթղթերը, թույլ է տվել կոպիտ սխալ, քանի որ սույն դեպքում ընկերությունից հանձնաժողովը կարող է շտկում պահանջել միայն այդ դեպքում, երբ որ անհամապատասխանությունը արձանագրվեր հրավերի պահանջների նկատմամբ, այսինքն ընկերությունը որևէ կերպով կստանձներ հանձնաժողովին ներկայացնելու տեխնիկական բնութագրով սահմանված տեղեկատվությունը, ինչը այս դեպում բացակայում է:

Բացի դա, կարելի է նշել նաև, որ ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգով ուժը կորցրած է ճանաչվել որակավորման չափանիշներ պարունակող կետերը, որոնց փոխարինման է եկել որակավորման ապահովման դրույթները: Այսինքն ընկերությունը որպես իր որակավորման չափանիշ ներկայացնում է որակավորման ապահովում: Այսինքն գործադիրը որոշել է այլևս չկիրառել որոկավորման չափանիշները փոխարինելով դրանք այլով: Սակայն Պատվիրատուն կարծես թե հաշվի չի առել այդ հանգամանքը:

Ցանկանում ենք նաև նշել, թե ինչու ընկերությունը չի շտկել հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը. քանի որ պատրաստվում էին վիճարկել ընկերությունից շտկում պահանջելու մասին որոշումը: Այսինքն այս դեպքում եթե վերացվի շտկում պահանջելու մասին որոշումը, օրենքի ուժով կվերանա նաև ընկերության հայտը մերժելու և գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումները:»:

Վերոգրյալների հիման վրա՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՏՈՒԳՈՒՄ/2022/Հ-40» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեղյալ համարել «Փուշընդփուլլ» ՍՊԸ-ի հայտում անհամապատասխանություն արձանագրելու, շտկում պահանջելու, հայտը մերժելու և գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումները:

3. <u>ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 14.04.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/6514-2022 գրությամբ դիմել է ՀՀ ոստիկանությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Փուշընդփուլլ» ՍՊԸ-ի կողմից 13.04.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով փաստաթղթեր ներկայացնելու և գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին՝ չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 18.04.2022թ.-ին թիվ 3/27/33015-22 գրությամբ ներկայացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված փաստաթղթերը և հայտնել հետևյալը.

««ՓՈՒՇԸՆԴՓՈՒԼ» ՍՊԸ-ի կողմից 13.04.2022թ.-ին ներկայացված բողոքով ԳԲՔԱ-ԼՕ- 2022/61 բողոքի (Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն, ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՏՈՒԳՈՒՄ/2022/Հ-40» գնանշման հարցման) քննության վերաբերյալ.

ՀՀ ոստիկանությունը տեխնիկական սպուգման ծառայությունների գնման նպատակով 28.03.2022թ.-ին հրապարակել է ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՏՈՒԳՈՒՄ/2022/Հ-40 ծածկագրով գնանշման հարցում: Գնանշման հարցմանը մասնակցության հայտ են ներկայացրել «ՓՈՒՇԸՆԴՓՈՒԼԼ» ՍՊԸ-ն և «Այթի էքսպերտիզա» ՍՊԸ-ն:

ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՏՈՒԳՈՒՄ/2022/Հ-40 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 07.04.2022թ.-ին N 2 արձանագրությամբ գնահատման նիստը կասեցրել է 1 աշխատանքային օրով՝ առաջարկելով հայտ ներկայացրած ընկերություններին շտկում կատարել ներկայացված հայտերում: «Այթի էքսպերտիզա» ՍՊԸ-ի կողմից շտկումը կատարվել է ժամանակին, սակայն նորից հրավերի պահանջներին ոչ համապատասխան, իսկ «ՓՈՒՇԸՆԴՓՈՒԼԼ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել հրավերով պահանջվող նախորդ տարիներին կատարված նմանատիպ ծառայությունների վերաբերյալ պայմանագրեր, ինչպես նաև հրավերով պահանջվող համապատասխան աշխատակազմի վերաբերյալ փաստաթղթեր: Ուստի գնահատող հանձնաժողովի 11.04.2022թ.-ի թիվ 3 որոշմամբ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՏՈՒԳՈՒՄ/2022/Հ-40 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել չկայացած ՀՀ գնումների մասին օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՏՈՒԳՈՒՄ/2022/Հ-40 ծածկագրով գնման գործընթացի շրջանակներում հրավերով մասնակիցներին ներկայացվող պահանջները ուղղակիորեն բխել են սույն հոդվածից:

Գնման գործընթացի նպատակն է եղել պայմանագիր կնքել այնպիսի Ընկերության հետ, որը կարող է պատշաճ մատուցել հրավերով նախատեսված ծառայությունները, մասնավորապես իրականացնել ՀՀ Ոստիկանության ստորաբաժանումներում առկա համակարգչային սարքերի, ծրագրերի, ծրագրային փաթեթների, սարքավորումների տեխնիկական վիճակի, արդիականացման անհրաժեշտության, նոր սարքեր-սարքավորումների ձեռքբերման անհրաժեշտության հիմնավորման նպատակով իրականացվելիք մասնագիտական ուսումնասիրություն: Այսինքն՝ ակնհայտ է, որ

ոստիկանության համակարգի ծրագրերի, ծրագրային փաթեթի ուսումնասիրություն կարող է իրականացնել այն ընկերությունը, որը կունենա որոշակի փորձառություն. աշխատակազմ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Մասնակցի կողմից ներկայացված հայտը ներառել է վերը նշված տեղեկությունների միայն մի մասը, ինչը հնարավորություն է տվել ոստիկանությանը մասնակիցների տալու ժամանակ՝ հրավերի պահանջներին համապատասխան փաստաթղթեր /տեղեկություններ/ ներկայացնելու համար:

Ինչ վերաբերում է Մասնակցի այն դիրքորոշմանը, որ կարող էր ներկայացնել միայն որակավորման ապահում որակավորման չափանիշների փոխարեն, ապա <<Գնումների մասին>> օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ օրենքի /թիվ ՀՕ-4-Ն/ 1-ին հոդվածի համաձայն՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը պետք է

լրացվի 10.1 կետով, ըստ որի որակավորման ապահովումը հանդես է գալիս որպես սույն օրենքով նախատեսված դեպքերում հրավերով սահմանվող որակավորման չափանիշներին փոխարինող ապահովման միջոց: Նշված իրավական կարգավորումը ուժի մեջ է մտնելու 01.06.2022թ.-ից: Հետևաբար այն հիմնավորումը, որ Ընկերությունը որակավորման չափանիշների փոխարեն կարող է ներկայացնել որակավորման ապահովում, անհիմն է:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում եմ չբավարարել «ՓՈՒՇԸՆԴՓՈՒԼ» ՍՊԸ-ի կողմից 13.04.2022 թվականին ներկայացված բողոքը, քանի որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, որոշումներ կայացնելիս, հիմնվել է գնումների մասին ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի պահանջների վրա և նշված պահանջների խախտում գնահատող հանձնաժողովի կողմից տեղի չի ունեցել:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2022/61 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ ոստիկանության կողմից տեխնիկական ստուգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 28.03.2022թ.-ին հայտարարվել է «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՏՈՒԳՈՒՄ/2022/Հ-40» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Փուշընդփուլլ» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի համաձայն՝ սահմանվել է հետևյալը. «Տեխնիկական ստուգման ծառայություններ, ՀՀ Ոստիկանության ստորաբաժանումներում առկա համակարգչային սարքերի, ծրագրերի, ծրագրային փաթեթների, սարքավորումների տեխնիկական վիճակի, արդիականացման անհրաժեշտության, նոր սարքեր-սարքավորումների ձեռքբերման անհրաժեշտության հիմնավորման նպատակով իրականացվելիք մասնագիտական ուսումնասիրություն՝ 2019 թվականի հունվարի 1-ից մինչ գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի օրը ձեռք բերված համակարգչային, այլ տեխնիկական միջոցների և ծրագրային համակարգերի քանակական ու որակական, առկա ապրանքի կամ ծառայության

համապատասխանությունն ըստ գնման հայտի տեխնիկական բնութագրի, ինչպես նաև դրանց ձեռքբերման անհրաժեշտության հիմնավորում:

Ուսումնասիրությունն իրականացվելու է համաձայն Պատվիրատուի կողմից ներկայացվածի, միաժամանակ Պատվիրատուն պարտավորվում է Կատարողին ներկայացնել ստուգման ենթակա գնման ընթացակարգերի մաս կազմող բոլոր փաստաթղթերը և ապահովել ձեռք բերված ապրանքների և ծառայությունների ստուգման համար անհրաժեշտ պայմանները (տեսնել ապրանքները և ծրագրերը, դրանց տեխնիկական փաստաթղթերը, թույլ տալ աշխատեցնել և ստուգել համապատասխանությունը պահանջվող չափանիշներին և այլն): Կատարողը պետք է տրամադրի համապատասխան մասնագիտական եզրակացություն /հաշվետվություն/ և այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

Կատարողը պարտավոր է ապահովել ձեռքբերվող ծառայությանը առնչվող բոլոր տեղեկությունների գաղտնիությունը:

Գնման ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող մասնակիցը կամ մասնակցող կոնսորցիումի գոնե մեկ անդամը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար՝

1. մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

- ներկայացնի հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք տարիների ընթացքում մասնակցի կողմից պատշաճ ձևով մատուցած նմանատիպ ծառայությունների վերաբերյալ փաստաթղթեր, մասնավորապես՝ համակարգիչների, համակարգչային սարքերի տեխնիկական վիճակի և ծրագրային փաթեթների սպասարկման պայմանագրեր, ինչպես նաև ներկայացվող պայմանագրերի պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթերի պատճեններ /հանձնման-ընդունման արձանագրություն/:

2. համապատասխան մասնագիտական աշխատակազմ, որը պետք է բաղկացած լինի առնվազն 3 անձից, ովքեր կունենան՝

ա/ համապատասխան մասնագիտական որակավորում /անհրաժեշտ է ներկայացնել որակավորումը հավաստող փաստաթղթեր՝ օր. դիպլոմ, վկայագիր, հավաստագիր/

բ/ առնվազն 3 տարվա համապատասխան աշխատանքային փորձ /անհրաժեշտ է նշել յուրաքանչյուր մասնագետի գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը, ժամանակահատվածը, գործատուի անվանումը/:»:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 07.04.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Փուշընդփուլլ» ՍՊԸ-ի կողմից

ընդհանրապես չի ներկայացվել նախորդ տարիներին կատարված նմանատիպ ծառայությունների վերաբերյալ պայմանագրեր, ինչպես նաև չի ներկայացվել հրավերով պահանջվող համապատասխան աշխատակազմի վերաբերյալ փաստաթղթեր:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշել 1 (մեկ) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Փուշընդփուլլ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի 11.04.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Փուշընդփուլլ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել շտկված տարբերակը և Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, որոշել է «Փուշընդփուլլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը որոշել է գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Փուշընդփուլլ» ՍՊԸ-ի կողմից 13.04.2022թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է

հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

ՀՀ ոստիկանության կողմից տեխնիկական ստուգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 28.03.2022թ.-ին հայտարարված «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՏՈՒԳՈՒՄ/2022/Հ-40» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը

պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՍՊԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Օրենսդիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթները իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում են հանձնաժողովի քարտուղարի գործողությունները, որոնք պետք է իրականացվեն մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների դեպքում, այն է՝ հանձնաժողովի

քարտուղարը նույն օրը անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչպես նաև մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 41-րդ կետի դրույթների իմաստից բխում է, որ մասնակցի ներկայացրած հայտը գնահատվում է բավարար այն դեպքում, երբ այն համապատասխանում է հրավերով նախատեսված պայմաններին:

Հարկ է նկատել նաև, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթների վրա հասնելու (կիրառելու) հանգամանքը գործադիրը պայմանավորել է հրավերի պահանջների նկատմամբ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների հանգամանքով: Այլ կերպ ասած՝ նախ անհրաժեշտ է արձանագրել անհամապա-տասխանություն, ապա դրանից հետո նոր առաջարկել կատարելու շտկում:

Ըստ այդմ՝ Պատվիրատուն և Հանձնաժողովը, գնման գործընթացի մասնակիցների հայտերի գնահատումն իրականացնելիս, չպետք է վերջիններին ծանրաբեռնեն այնպիսի պարտականություններով, որոնք ուղղված են ձևական պահանջների պահպանմանը, կամ, առավել ևս, մերժեն ներկայացված հայտերը, եթե մասնակիցների վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Միաժամանակ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ծանուցման էությունը կայանում է և ուղղված է Մասնակցին որոշակի հանգամանքների վերաբերյալ իրազեկելուն, տեղեկատվություն տրամադրելուն և բովանդակության ամբողջությանը հասու դարձնելուն:

Բողոքներ քննող անձը, ամփոփելով վերոգրյալ դիրքորոշումը, եզրահանգում է նաև, որ թեև գործադիրը հստակ չի սահմանում, թե ծանուցումն ինչպիսի՞ բովանդակություն պետք է պարունակի, սակայն միանշանակ է այն, որ ծանուցումը պետք է լինի այնպիսին, որ հնարավորություն կտա իրապես պարզելու դրանում պարունակվող հանգամանքը (ները), և մասնակցի կողմից ծանուցման հետ ծանոթանալու իրական հնարավորություն ստեղծվի: Այսինքն՝ մասնակիցների համար ծանուցումն իրական հնարավորություն պետք է ապահովի

տիրապետելու դրա բովանդակությանը: Ընդ որում, հարկ է նկատել, որ շտկման մասին ծանուցումը պետք է պարունակի նաև տվյալներ շտկման ենթակա փաստաթղթերի ներկայացման ձևի և կարգի վերաբերյալ (կոնտակտային տվյալներ, էլեկտրոնային փոստի հասցե, որին պետք է մասնակիցն ուղարկի շտկված փաստաթղթերը կամ ներկայացման եղանակը և այլն): Ինչպես նաև այլ անհրաժեշտ տեղեկություններ, որոնք հնարավորություն կընձեռեն ծանուցումը (արձանագրությունը) ստացած մասնակցին, ծանուցմամբ նշված բովանդակությանը ծանոթանալուց հետո, շտկել անհամապատասխանությունները և ներկայացնել այն ձևով, ինչպես նշված է ծանուցմամբ կամ ներկայացված արձանագրությամբ:

Վերոնշյալ պարտադիր վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր միայն փաստել՝ ծանուցման նպատակի լիարժեք իրականացման հանգամանքի մասին:

Օրենքի 2-րդ հոդվածի՝ օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների 1-ին մասի 18-րդ ենթակետի համաձայն՝ խորհրդատվական ծառայություններ՝ ծառայություններ, որոնց մատուցման արդյունքում ստեղծվում են ոչ նյութական՝ ֆիզիկական սուբստանցիայից զուրկ ակտիվներ (արժեքներ):

Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է խորհրդատվական ծառայությունների գնման դեպքում՝ հայտերի գնահատման չափանիշները, դրանց տրվող նվազագույն և առավելագույն միավորները, ինչպես նաև մասնակցի կողմից հայտով ներկայացվելիք փաստաթղթերը: Ընդ որում, շինարարական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման և (կամ) տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքում գնային պայմանի համար սահմանվող չափանիշը չի կարող պակաս լինել քսան և ավել երեսուն միավորից:

Հրավերի 4.3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, որը ներառում է՝

ա) հավաստում սույն հրավերով սահմանված մասնակ¬ցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին.

բ) հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, սույն հրավերի 1-ին մասի 2.4 կետով սահմանված կարգով և ժամկետում որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության կամ սույն հրավերով նախատեսված վարկունակության վարկանիշ ունենալու մասին.

գ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

դ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

ե) իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1-ի: Հայտարարագիր չի ներկայացվում, եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր կամ ֆիզիկական անձ է:. որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև տեղեկագրում:

2) իր կողմից հաստատված գնային առաջարկ.

4) գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով:

5) համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

Ընդ որում համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) սույն ընթացակարգին մասնակցելու դեպքում՝

- համատեղ գործունեության պայմանագրի կողմերից որևէ մեկը չի կարող սույն ընթացակարգին (միևնույն չափաբաժնին) ներկայացնել առանձին հայտ: Սույն պարբերության պահանջի չպահպանման դեպքում հայտերի բացման նիստում մերժվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը.
- եթե համատեղ գործունեության պայմանագրով սահմանված է, որ մասնակիցների ընդհանուր գործերը վարում է համատեղ գործունեության պայմանագրի առանձին մասնակից, ապա հայտը ներկայացվում, իսկ պայմանագիր կնքվելու դեպքում վճարումները կատարվում են այդ մասնակցին: Այն դեպքում, երբ համատեղ գործունեության պայմանագրով նախատեսվում է, որ ընդհանուր գործերը վարելիս յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի գործել բոլոր մասնակիցների անունից, ապա պայմանագիր կնքվելու դեպքում դրա հիման վրա վճարումները կատարվում են հայտը ներկայացրած մասնակցին:

6) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն ընթացակարգի շրջանակում կնքվելիք պայմանագիրը կատարելու ժամանակ, գնային առաջարկով ներկայացվող արժեքի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը ուղղելու պարտավորության վերաբերյալ (հավելված 1.1)՝ - նշելով նաև.

- աշխատողների քանակը, որոնց միջոցով պետք է ապահովվի պայմանագրի կատարումը,

- կցելով նաև օգտագործվելիք նյութերի ցանկը՝ անվանումների, գումարների և քանակների նշումով:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ոստիկանության կողմից տեխնիկական ստուգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 28.03.2022թ.-ին հայտարարված «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՏՈՒԳՈՒՄ/2022/Հ-40» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Փուշընդփուլլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ չի ներկայացվել նախորդ տարիներին կատարված նմանատիպ ծառայությունների վերաբերյալ պայմանագրեր, ինչպես նաև չի ներկայացվել հրավերով պահանջվող համապատասխան աշխատակազմի վերաբերյալ փաստաթղթեր, ինչով պայմանավորված՝ Հանձնաժողովը որոշել 1 (մեկ) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Փուշընդփուլլ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

11.04.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Փուշընդփուլլ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել շտկված տարբերակը և Հանձնաժողովը, որոշել է «Փուշընդփուլլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Ընկերության բողոքով ներկայացրած հանգամանքներին, ուսումնասիրելով Հանձնաժողովի 07.04.2022թ.-ի կայացված նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունները՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ սույն դեպքում, Հանձնաժողովի կողմից Ընկերության կողմից ներկայացված հայտում արձանագրելով անհամապատասխանություն՝ խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 41-րդ կետի դրույթների պահանջները. Մասնավորապես՝ անհամապատասխանություն արձանագրելու և

շտկման մասին ծանուցումն ուղարկելու մասին Հանձնաժողովի կայացրած որոշումը հանգեցրել է Կարգի 41-րդ կետի խախտմանը:

Հարկ է նկատել, որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի իմաստով, մասնակցի հայտը գնահատվում է հրավերի պահանջների նկատմամբ ու այդ պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունների դեպքում է միայն հնարավոր կիրառել նշված դրույթները և շտկման մասին ծանուցում ուղարկել մասնակցին:

Սույն դեպքում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Հրավերով սահմանված չի եղել հավելված 1.1-ը, ինչպես նաև նույն հրավերի 4.3-րդ կետով չի սահմանվել նախորդ տարիներին կատարված նմանատիպ ծառայությունների վերաբերյալ պայմանագրեր և աշխատակազմի վերաբերյալ փաստաթղթեր ներկայացնելու մասնակցի պարտավորություն: Ընդ որում՝ Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության իմաստով Հրավերում ներառված չէ հայտերի գնահատման չափանիշները, դրանց տրվող նվազագույն և առավելագույն միավորները, թեև միևնույն ժամանակ Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանվել է մասնակցի կողմից հայտով ներկայացվելիք փաստաթղթերը: Բայց թե ի՞նչպես պետք է դրանք գնահատվեին (անգամ եթե մասնակցի կողմից ներկայացվեին) Հրավերում առկա չէ որևէ դրույթ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Փուշընդփուլլ» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները սույն որոշմամբ բերված իրավական ու փաստական հանգամանքների և արված վերլուծությունների ամբողջությամբ հիմնավոր են, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից «Փուշընդփուլլ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու մասին կայացված որոշումն իրավաչափ չէ՝ որպիսի պայմաններում Հանձնաժողովի կողմից չի ապահովվել Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Փուշընդփուլլ» ՍՊԸ-ի կողմից 13.04.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/61 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍՏՈՒԳՈՒՄ/2022/Հ-40» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Փուշընդփուլլ» ՍՊԸ-ի հայտում անհամապատասխանություն արձանագրելու, շտկում պահանջելու, հայտը մերժելու և գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**